

# ՃԱՇԱԿ

## ՊԱՍԿԱԼԻ ՊՐԵԲԱՐԵԼԱՆ

### ՊԱՍՄԱԿԱՆ

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

#### ՀԱՅ ԼԵԶՈՒԻ (1)

Ի մնացորդս հին երգոց Հայոց ոչ գտանեմք չափ և թիւ,  
որպէս ունէր հին յոյն և լատին բանաստեղծութիւնն : Ոմանք  
հայեցեալ յանունն «թուելեաց» առ Խորենացւոյն՝ կարծե-  
ցին թէ: առ Հայս ևս գոյր ազգ ինչ չափով բանից, այլակերպ  
ի հատակոտորոց անտի որ հասին առ մեզ, նա ի հատակոտորս  
խոկ անդ երազեցին տեսանել թիւ և չափ : Այլ Խորենացին  
զաթուելեաց» երգսն չհամարի այլ ազգ յերգոց վիպասանաց :  
Զնոյն երգս Գողթան «զԱրտաշիսէ և զորդւոց նորա» կոչէ  
Խորենացին մերթ «թուելեաց» և մերթ «վիպասանաց» երգս,  
որպէս և այլուր զվիպասանսն կոչէ «երգիչ» : «Յայտնեն  
զայս նուելեաց» երգք զորս պահեցին մարդիկ գաւառին Գող-  
թան, յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նո-  
րա (Խոր. Բ. 1.): «Արտաշիսի վերջնոյ գործք բազում ինչ  
յայտնի են քեզ ի վեպասանաց» որ պատմին ի Գողթան» (Խոր.  
Բ. ԽԹ. ) . «Զամանէ (զԱրտաւազլայ) Երժէլն Գողթան առաս-  
պելաբանեն այսպէս» (Խոր. Բ. ԿՈ.): Յայտնի է ուրեմն թէ  
բանն «թուելի» առ Խորենացւոյն նշանակէ վիպասանութիւն  
կամ երգ, ոչ եթէ յանձուկ միտս չափով բանք :

Երգք վիպասանաց մերոց, որպէս դիւրին է տեսանել  
ի հատակոտորոց անտի որ ի վերցն եղան, էին ժողովրդա-  
կան վէպք, յօրինեալք յերգել, վասն որոյ և կոչին «երգք»,  
և ունին առանձինն իմն յօրինուած, որոյ գլաւոր արուեստ  
է կրկնել զակիզբն և զվերջ իւրաքանչիւր տողի ի յաջորդի.

(1) Տես զթիւ է.

անդ այնպիսի իմն օրինակաւ , որպէս զի երգոյն լինել իբրև  
անձայն նուագ , դիւրին յառնուլ ի միտ , այլակերպ յար-  
ձակէն որում չէր ծանօթ յայնժամ անգիր հայ դպրութիւնն :  
Այսպէս արուեստ հին հայ վիպասանութեան ընծայեցուցա-  
նէ ոչ սակաւ նմանութիւն երրայական բանաստեղծութեան ,  
այն է՝ կրկնումն իւրաքանչիւր տողի ի յաջորդին այլովք բա-  
նիւք (parallelisme) :

Համառօտ օրինակք որ գկնի՝ բաւական են ի յուցանել  
զմտիր արուեստի երրայական բանաստեղծութեան և մերոյն :

Ապրեցո զիս , Տէր , ի մարդոյ չարէ ,

Յառնէ անիրաւէ փրկեա զիս :

Թագուցին ամբարտաւանք որոդայթ ինձ ,

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց :

Եւրինք ցնծացին որպէս խոյք ,

Եւ բլուրք՝ որպէս գառինք մաքեաց :

Դարձոյց զիմն ի վլուակս ջուրց ,

Եւ զապառաժն՝ ի յաղբերակունս :

Ահա երրայական բանաստեղծութիւն :

Երկնէր երկին և երկիր ,

Երկնէր և ծիրանի ծով .

Երկն ի ծովուն ունէր գկարմրիկ եղեգնիկն .

Ընդ եղեգան փող ծուխս ելանէր ,

Ընդ եղեգան փող բոց ելանէր :

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւա-

ռէն , զֆասազ գետով ,

Եկեալ նստեալ զնրէշ բլրով , զԱրտիմէդ քազաքաւ , զֆասազ  
գետով ,

Տեղ ոսկի տեղայր ի մեսայութեանն Արտաշիսի .

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն :

Իրեւ զմէգն Տրդատ , որ սիդալով աւերեաց զթումբս  
գետոց ,

Եւ ցամաքեցոյց ի սիգալ իւրում զյորձանս ծովուց :

Դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս ,

Զքեզ կալցին քաջք , տարցին յազատ ի վեր ի Մասիս :

Ահա հայ բանաստեղծութիւն :

Եթէ երրայական բանաստեղծութեան դրոշմն է բարձրութիւն և ծանրութիւն , մերոյն է զուարթութիւն և ոստումն : Երրայականն թուի իմ վերանալ , մինչ մերն խայտայ : Ո՛չչափ նման են սակայն մերումն գեղեցիկ տողքս յերգոյն Դեռպովրայ .

Կապոյտ երանգոցն Սիսարայ ,

Նարօտ պէսպէս նկարուց :

Այն էր պարանոցի նորա կապոյտ :

Ի սակաւ օրինակաց աստի երրայական և հայ բանաստեղծութեան գիւրին է տեսանել ոչ զարուեստ միայն , այլ և զազգ կամ զբնութիւն երրայականին և մերոյն : Մինչ երրայականն էր քնարական , այն է՝ մրմունջ , մանաւանդ կրօնական . ի ձեւ աղօթից , խոստովանութեան և գոհութեան , զորոց զօրինական ընծայեցուցանեն մեզ Սաղմոսք , մերն էր գիւցազնական , այն է՝ վիպասանութիւն , այսինքն պատմութիւն դործոց թագաւորաց և թագաւորազանց , իբրեւ դից և գիւցազանց , այլասացիկ ձեւով : Այսպէս հնագոյն անգիր մատենագրութիւն մեր , երգք վիպասանացն , ունի առաւելիմն նմանութիւն արեւմտեան յոյն-հովմէականին , զորոյ օրինակն ունիմք յերգան Հոմերի և Վիրգիլեայ , որպէս և արեւմտեան հիւսիսայնոյն , Աստիանու , քան արեւելեան արիականին որ , իբրեւ զերրայականն , են մրմունջք , աղօթք և օրհնութիւնք , ուրեք նաեւ հրամանականք (dogmes) , այն է՝ զհաւատապեաց և զկրօնից եկեղեցւոյ , որպէս Վետայն՝ Հնդիկ , և Զենտաւեադն՝ Զանդիկ կրօնից : Վիպասանք մեր սակայն թուի թէ առնուին յերգ ի զրուցաց Արեաց բազում ինչ որ ունէր զձեւ և զկերպարանու վիպասանութեան : Այսպէս ազգի ազգի ձեւովք գտանեմք կրկնեալ առ հինան մեր զարիսկան առասպելն զԶոհակայ (Յիւրասպի Աշդահակ ըստ Խորենացւոյն) և Հրուդենայ (Ֆէրխոտոն) : Ըստ զանդիկ աւանդութեան , Ճէմիխա ոմն ասի լեալ առաջին թագաւոր Արեաց (կամ մանաւանդ առաջին մարդ) ի նուիրականն Բահլ : Զոհակ ոմն (վիշապ կամ օձ) եկեալ յԱրարացւոց կողմանց՝ ընկենու զՃեմշիտ , և ինքն թագաւորէ . այլ Հրուդեն , ի զաւակէ նորա , աստ ուրեմն յաղթեալ Զոհակայ՝ արգելու զնա յայրի միում

ի լերինն Դմաւէնդ , և այսպէս ազատէ վարիական ազգն ի բռնաւորէն : Այս առասպելը որ նմանութիւն իմն է խարելց առաջնոյ մարդոյն ի թելադրութենէ օճին և անկանելց ի գըրախտէն , և ապա ուրումն ի զաւակէ նորա փրկելց զազգ մարդկան յիշխանութենէ անտի չարին , նշմարի , ոչ միայն ի վիպասամութեան զԱհագնէ որ ընդ վիշապաց կռուի և յաղթէ ըստ հայ առասպելին , այլ և ի պատմութեան Հայկայ սպանչի նելայ եկելց ի Բաբելոնէ . բայց յայտնագոյն ևս ի պատմութեան Տիգրանայ , յաղթողին Աշդահակայ , որ է զանդիկ ձեւն Զոհակլ անուան (իբրև Ահի-Տահակա , օծ սպանող) : Զոհակայ նմանութիւն է ասլաքն առասպելն վիպասանաց մերոց տանելց քաջաց զԱրտաւազդ յազատն ի վեր ի Մասիս , կալոյ նորա անդ և չտեսանելց զլոյս , արդելեալ շղթայիւք իբրեւ զբոնաւոր զոք , յորմէ երկնչէին նախնիք մեր թէ ելանելոց և ունելոց է զաշխարհս » (Եղն.) . և այս ոչ առ հեթանոսութեամբ միայն , այլ և առ քրիստոնէութեամբ , մինչև առ Խորենացով իսկ , բազմաց ի դարձնաց «յաւուր միաշաբաթւոջ երիցս կամ չորիցս բախել զսալն զի ջրասցին շղթայք Արտաւազդայ» (Խոր. Բ. ԿԱ.) :

Թէ արդարեւ գոյր ակնարկութիւն զառասպելին Զոհակայ յերգս վիպասանաց մերոց , անտի ևս թուփ լինել յայտ , զի Սահակ Բագրատունի , որպէս ինքն իսկ Խորենացին ասէ , խնդրէր ի նմանէ զպատմութիւն առասպելին : Խորենացին յակամայս իմն , որպէս ասէ , առնու յանձն կատարել զլորնդիրն Սահակայ , ի կատարածի առաջնոյ գպրութեանն , իբրև յաւելուած : « Բայց զի՞նչ արդեւք տարիանք քեզ Բիւրասպի Աժդահակայ փծուն և անձունի առասպելքն իցեն , և կամ է՞ր սակա զմեզ Պարսից անյարմար և անոմ բանից , մանաւանդ . թէ առաւել վասն անբանութեանն , առնես աշխատ :

• • • Այլ տացուք զայսոսիկ մանկականի քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարիանք : • • • Այլ ծանիր զատելութիւն մեր առ այսպիսի բան , զի ոչ յառաջինոն մեր առայեալ գիրս , և ոչ ի վերջին լանս արժանաւորեցաք շարել , այլ զատ և որիչ : Եւ սկսաց այսպէս : » Խորենացին զԱժդահակայ Բիւրասպի մարդկան արիական աւանդու-

թեան), առեալ, որպէս ասէ, ի պարսիկ աղբերէ, ասէ թէ  
«Ծախէր զմարդիկ ի պէտս որովայնի. իսկ ապա Հրուդենայ  
ումեմն կապել զնա սարեօք սրբնձիւք, և ի լեառն տանել որ  
կոչի Դըմբաւընդ: Այլ և (պատմէ առասպելն) ի ճանապարհի  
զննջելն Հրուդենայ, և Բիւրասպեայ քարշելն (զնա) ի բլուրն  
և զարթչելն Հրուդենայ և տանել զնա յայրս ինչ լերինն և  
կապել, և զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել. յորմէ  
պակուցեալ, հնազանդ կայ շղթայիցն, և ոչ զօրէ ելանել և  
ապականել զերկիր:» Մինչեւ ցայս վայր գրեթէ ծշդիւ միա-  
բան երթայ Խորենացին ընդ առասպելին, որպէս ունի և Շահ-  
նամէն: Յետոյ կամեցեալ տալ զմեկնութիւն առասպելին,  
խօսի շփոթի իմն և այլ ընդ այլոյ: Ըստ Խորենացւոյն որպէս  
թէ Աժդահակ (Զոհակ) զոր շփոթէ նա ընդ Յուշկապարկին  
Պիւրետոյ (Ովիսդ. Այլակերպ. Դպր. Բ. Բ.)՝ էր գլխաւոր պար-  
սիկ ցեղին առ Ներրովթաւ, քաւդեայ և կախարդ անհնա-  
րին, և զի չկարէր անձամբ յայտնապէս առնել չարիս, ի  
դիւաց որ սալասաւորէին նմա՝ ոմն, «զոր մանուկ սատանայի  
կոչեն, ասէ, յառասպելին,» եկեալ գնէր զգլսւս իւր ի  
վերաց ուսոց Բիւրասպեայ, որ խօսէր յականջն նորա, և նա  
համբուրեալ զուսոն երթայր կատարել զկամն նորա, «և յայ-  
նըմ հետէ չարութեան յաճախութիւն:» Եւ զի Բիւրասպն,  
այն է ըստ Պարսից, Զոհակն անուն, է աղաւաղեալն անուան  
«Ահի-Տահակա,» Աժդահակ, որ է սպանող վիշտապ կամ օձ,  
Խորենացին համարի այսպէս կոչեցեալ զիիւրասպ անտի, զի  
ի համբուրել «մանկան ստանայի» զուսոն Բիւրասպեայ՝ բու-  
սանէին վիշտապք. «ուսոցն համբուրումն, և անդուստ զվի-  
շտապայն ծնունդա:» Այլ զատոյգ պատճառ այսպիսի յորջորջման  
ընծայէ Խորենացին անհնարին մարդախոչոչ անագործու-  
թեանն Բիւրասպեայ: «Իսկ վիշտապայն բուսումն, կամ կա-  
տարելապէս վիշտապանալն Բիւրասպեայ որ ասի՝ է այս. քան-  
զի անբաւ մարդիկ սկսաւ զոհել (Բիւրասպ) դիւաց, մինչեւ  
տաղտկանալ ի նմանէ բազմութեանն և հալածել, և փախչել  
նմա ի նախասացեալ վերին կողմանսն, և ի սաստիկ վարելցն  
զնո՞թօթափիեցաւ ամբոխ նորա ի նմանէ: Յայս վատահացեալ  
վարողացն զնա՝ հանգեան աւուրս ինչ զաեղեօքն: Իսկ Բիւ-

րասպեայ ժողովեալ զցրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ ի վերայ, վնաս սաստիկ առնելով. այլ յաղթէ բազմութիւնն, և փախստական լինի նիւրասպ, և հասեալ սպանանեն զնա մերձ ի լետոնն, և ընկենուն ի վիճ մեծ ծծմբոյ:

Գիտել պարտ է զի հին զանդիկ առասպելն Ահի-Տահակայ կամ Աժդահակայ (վիշապի) և Հրուգենայ (ըստ Պարսից Զոհակ և Ֆէրիսուն) է արեւելեան ձեւ պատմութեան անկման առաջնոյ մարդոյն ըստ Գ. գլխոյ Ծննդոց, և յիշեցաք միայն ի ցուցանել թէ վիպատանութիւն մեր չէր ամենեւին ազատ յազդեցութենէ Զենտաւեստայ: — Եկեսցուք այժմ ի կարգ պատմութեան մերոյ որ զշայ լեզուէն:

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.

## Վ Ա Ր Փ

### Ս. ՄԵՄՐՈՊԱՅ ՄԱՇԹՈՒՑԻ (1)

(ԸՆՏ ԿՈՐԵԱՆ)

Առ այնու ժամանակաւ այր ոմն, անուն Բենիամէն, որ էր երէց աղուան ազգաւ, ի խնդիր նշանագրաց աղուաներէն լեզուի գնայր առ Մեսրոպ. որոյ հարցեալ ի նմանէ և քննեալ «զբարբարոս բանս» Աղուանից՝ յօրինէր նշանագիրս լեզուին ըստ «կորովի սովորութեան իւրում»: Եւ թողեալ յերկրին Հայոց որ ընդ իշխանութեամբ Յունաց՝ զերկուս յաշակերտաց իւրոց, վենովք և գիտան, ինքն դառնայր, հանդերձ աշակերտօք բազմօք, ի կորմանս Հայոց Մեծաց, և հասեալ ի Վաղարշապատ յանդիման լինէր Ս. Տահակայ և Արտաշիսի որ թագաւորէրն յայնժամ ի Հայս, պատմէր նոցա զամենայն զոր արար ի Բիւզանդիոն և զոր յետոյ այլուր, և դադարէր ի քաղաքին աւուրս քամնի մի:

Յետ ոչ քազում ժամանակի անցանէր Մեսրոպ ի կողմանս Աղուանից: և եպիսկոպոս աշխարհին, Երեմիա, և արքայն Արսվալ (2), հանդերձ ամենայն ազատօք, «առաւել հպա-

(1) Տես զթիւ է.

(2) Ըստ Խորենացւոյ՝ Արսվալէն:

տակութեամբ» զԱռըքն ընդունէին . ի տեղեաց տեղեաց աշխարհին ի մի վայր ածել հրամայէին բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեան , և ո.ո.նիկս կարգէին ի դարման նոցա :

Իսկ իբրեւ հրամանն յանկ ելանէր «արդեամբք և գործովք» , երանելին Երեմիա ձեռն արկանէր այնուհետեւ ի թարգմանութիւնս աստուածեղէն գրոց ի լեզու աղուան . և «անդէն յական թօթափել , վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից՝ մարդարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժանդք լինէին» : Դարձեալ հրամանաւ արքային ազգն «սատանայակիր և դիւամոլ» գայր ի հնազանդութիւն Ծոյն Քրիստոսի :

Այլ Մեսրոպ ձեռնտու եւս լինէր եպիսկոպոսին Մուշեղի , որ էր վարդապետ ի Բաղասակիսն (1) կողմանս : Ապա զոմանս յաշակերտաց իւրոց թողեալ վերակացուս յաշխարհին Աղուանից՝ հանդերձ քահանայիս ոմամբ որ անուանէր Յովսաթան , անցանէր ինքն ի կողմանս Վարաց ընդ ձորն Գարդմանական (2) : Անդ ընդ առաջ լեալ իշխանն Գարդմանից , որում Խուրս անուն էր , ասպեղական լինէր Սրբոյն «աստուածասէր երկիւղածութեամբ» . և վայելեալ «ի հիւթև ի պարարտութիւն վարդապետութեան» նորա՝ «յուղարկէ զերանելին ուր և երթալոցն էր» :

Հասանէր Մեսրոպ անդրէն յաշխարհն Վարաց առ թագւորութեամբն Արծիւզի , յոյր ձեռն ծաղկեալ էր յայնժամ քրիստոնէութիւն ընդ ամենայն կողմանս աշխարհին . և «ըրջեալ զամենայն աշակերտոք» զոր թողեալ էր անդ յառաջագոյն՝ պատուէր նոցա տայր միւսանգամ «կալ ի ճըշմարտութեանն» :

Ի նմին ժամանակի իշխանն Տաշբացւոց (3) , Աշուշայ ,

(1) Տոհմ մի էր Հայոց յաւորց անտի Արշակայ թ.ի եւ Մեծին Ներսիսի , եւ կողմանց յորս բնակէրն՝ Բաղասականք անուն էին .

(2) Գարդման զաւառ էր յԱւափի ի Մեծ Հայս . նովին անուամբ բնակէր զաւառին կոչէին Գարդմանացիք : Աղուանը ապա առին զգաւառն :

(3) Տաշիր անուն էր զաւառի ի Գուգարացւոց աշխարհին Հայոց Մեծաց . զնա ապա Վիրք կալան . եւ որ ի զաւառի անդ բնակէր էին՝ կոչէին Տաշբացիք , որոց յայնժամ իշխան էր Աշուշայ .

ընկալեալ զՄեսրոպ՝ « ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով » վայելել զվարդապետութիւն Սրբոյն . որ և քարոզեալ ի կողմանս անդ աւուրս ինչ և յանձն արարեալ զերկիրն Սամուելի եպիսկոպոսին՝ դարձ առնէր այսրէն ի Հայս , և բանիւ ցուցանէր Ս. Սահակայ և որոց պատահէրն՝ զոր ինչ միանգամ արարեալն էր յաշխարհին Աղուանից և յայլ ի տեղիս տեղիս ըստ նորագործ իրացն :

Ապա ուշ գնէին երանելիքն երկոքին « զիւրեանց ազգին պդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել » , և ոչ դադարէին ի գրելոյ և ի թարգմանելոյ : Դարձեալ յդէին զերկուս յաշակերտաց անտի , գՅովսէփին և զԵզնիկ Կողբացի , ի քաղաքն Եղեսացւոց , « զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս » հանել ի հայ յասորի լեզուէ : Որոց հասեալ յԵղեմիս և կատարեալ զհրաման վարդապետացն՝ դառնային՝ ի Հայս : Ապա գնային հրամանաւ ի կողմանս Յունաց , ի Բիւզանդիսին , և յետ սակաւ ժամանակի հասանէին անդր և աշակերտք երկու , Ղեւոնդէս և Կորիւնս , որոց միաբանեալ ընդ առաջինսն՝ ուսանէին և պարապէին ի թարգմանութիւնս գրոց ի հելլէն լեզուէ : Եւ առեալ զհաստատուն օրինակս աստուածատուր գրոց և զբազում աւանդութիւնս հարց , և զՆիկիական և զԵփեսոսական կանոնս , դարձ առնէին յաշխարհն Հայոց , և գնէին առաջի Սահակայ և Մեսրոպայ « զկտակարանսն Եկեղեցւոյ սրբոյ » :

Եւ մինչդեռ Ս. Սահակ , հանդերձ Եզնկաւ , « զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս » հաստատէր ձշմարփտ օրինակօք բերելովք ի Կոստանդինական քաղաքէն , ոչ դադարէր անդուստ Մեծն Մեսրոպ « ձառս յաճախագոյնս , դիւրապատումն , չնորհագիրս , բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարդարէականաց կարգել և յօրինել , լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան » :

Օրինակ զայս առնէր Ս. Մեսրոպ ընդ բնաւ կողմանս Հայոց , Վրաց և Աղուանից , « զամենայն ժամանակս կենաց իւրոց , զամառն և զձմեռն , զտիւ և զգիշեր » , և գործս բարիս և առաքինութիւնս մեծամեծս գործէր ամենայն ուրեք . « ան-

համար գունդս վանականաց իշխոս և յանչէնս բնակեցուց-  
եալ հաստատէր», և ոչ զմիով իւիք որ ինչ ի պէտո պայ-  
ծառութեան Հայաստան աշխարհին՝ առնէր զանց :

Յետ այնորիկ հասանէր վախճան Ս. Սահակայ ի Բագրա-  
ւանդ գաւառի, ի գեղջն Բլրոցաց, յառաջնում ամին Յաղ-  
կերտի, թագաւորին Պարսից, ի կատարել ամսեանն Նաւա-  
սարդի, «որպէս և զօր ծննդեան Երանելոյն յիշէին» : Եւ  
գլխաւորն ի պաշտօնէից նորա, Երեմիա, և Խխանակին ոմն,  
Դուստր անուն, որ էր կին Վարդանայ Մամիկոնենի, հան-  
դերձ ամենայն ձեռնասուն աշակերտօք և մեծաւ ամբոխիւ,  
բարձեալ զմարմին Սրբոյն՝ «սաղմոսիւք և օրհնութեամբ և  
հոգեւոր բարբառով» ընդ տիւ և ընդ գիշեր տարեալ հա-  
սուցանէին ի գաւառոն Տարօնոյ, «ի բուն իսկ գիւղն յիշ-  
տիշատ» : «Եւ անդ ի մարտիրոսական խորանին, յարկեղ  
սրբոցն, Եղեալ «անուշահոտ խնկօք» զմարմինն սուրբ՝ կըն-  
քեցին զգերեզմանն «քրիստոսադրոշմ կնքով» : Եւ ամի ամի  
գումարեալ ի նմին ամսեան «զնոյն յիշատակն տօնախմբեն» :

Իբրեւ զգաստ եղեւ Ս. Մեսրոպայ զԵրանելոյն վախ-  
ճանէ, «անձկայրեաց տրտութեամբ և արտօսրագութ ող-  
բովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր» . մինչեւ,  
յետ վեցից ամսոց զկնի վախճանելոյն Ս. Սահակայ, Եհաս և  
«քրիստոսակոչ կատարումն» Մեծին Մեսրոպայ Մաշթոցի,  
յերեքտասաններորդում ամսեանն Մեհեկանի, ի Վաղարշա-  
պատ քաղաքի, սակաւ ինչ աւուրց հիւանդութեամբ :

Արք Երկու, «պատուականք, Երկիւզածք, հրամանակա-  
տարք վարդապետական հրամանաց», Վահան Ամաստունի և  
Հմայեակ Մամիկոնեան, «հանդերձ աշխարհական ամբոխիւ,  
սազմոսիւք և օրհնութեամբ և հոգեւոր ցնծութեամբք, կան-  
թեզօք վառելովք և ջահիւք բորքելովք և ամենայն լուսա-  
ճանանչ գնդիւն» բարձեալ զմարմին Սրբոյն՝ Ելսնէին ի գիւղն  
Օշական և ամփոփէին ի մարտիրոսալրանի անդ, յետ կատա-  
րելոյ «զօրինաւոր յիշատակն» :

Իսկ իրբեւ ամք Երեք անցին ի վերայ, Վահան Ամաստունի  
տայր կանդնել անդ խորան սքանչելի ի տաշածոյ վիմայ,  
և ի ներքսագոյնս խորանին յօրինէր զհանդսուոց Սրբոյն

ի « սպասս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկւով  
և արծաթով և ակամք պատուականօք » : —

Արդ , այսմ ամենայնի զոր ցուցի՝ իմ խկ ականատես է  
լեալ , և ոչ երբեք « սուտապատում ճարտարախոս » գտեալ  
ի բանս իմ զոր մատենագրեցի զՀօրէն իմմէ :

Յ. Գ.

## ԳԻՏՆԱԿԱՆ

### ԽՈՐՃՈՒԹԻՒՆ

Նմանութիւն իրաց ինչ որ ծնուցանիցէ ի մեզ զուրա-  
խութիւն հաճոյից՝ ընդ այլով իւիք հանդամանօք զարթու-  
ցանէ ի սրտի մերում զագգումն ատելութեան , զոր կոչեմք  
խորշութիւն (antipathie) :

Զիք գիտել ճգիւ գտակաւ՝ ի մարմնոյ թէ ի հոգւոյ խոր-  
շութիւնն ծագիցէ :

Արդարեւ ձգտումն ինչ ջլաց սաստիկ է խորշութիւն ,  
որ ծնանի ի մեզ ի տես կամ ի լուր իրաց իրիք զոր ատի-  
ցեմք :

Ազգ ինչ խորշութեան է որում տան սկիզբն պատճառք  
իրաւականք . այլ բաղում այն է՝ զի ամենեւին ի ցնորից լինի  
խորշութիւն :

Որոց արդար իցեն պատճառք՝ ծագին խորշութիւնք  
ի վնասակար իրաց , և ազդեն մեզ մերթ ի մօտոյ , զոր օ-  
բինակ խորչի մարդ յօձէ և ի թունոյ և ատեայ զնոսա , և  
մերթ ի հեռուստ , յորժամ ոչ առաջի աշաց զիրսն յորոց  
գարշիմք՝ տեսանիցեմք , այլ ի միաս մեր նկարիցեմք զնոսա ,  
եթէ ընդ փորձ իրացն անցեալ իցէ :

Այլ դէպ լինի երբեմն , առանց իրիք պատճառաց , ծնա-  
նել ի մեզ խորշութեան , որ ի կարիս ազգի ազգիս ածէ զմեզ  
յակամայ կամ :

Հայր ոմն , պատմէ Նիպովիոս , ոչ հանդարտէր հայել ի  
մասուկ իւր միամօր յօրէ անտի ծննդեան նորա . ընդ մոտա-  
նելն ի սենեակ որրոցի մանկանն և տեսանել զնա՝ անդէն  
վաղվաղակի ի մտաց անկեալ ցնորէր : Ոչ եղեւ ինչ նմա հնար  
թափել զանձն ի նորանշան ատելութենէ անտի , մինչեւ հարկ  
լինել հօրն հեռացուցանել զմանկիկն հէք ի հայրենի երդոյն :

Ֆապրիս Տը Հիլտըն ճանաչէր երիտասարդ մի կասքո-  
նացի , որոց այնպէս իմն էր խորչութիւն ի հացէ , մինչեւ  
ի տես պատառոյ միոյ անկանել իսկ և իսկ ի տեսնդ ան-  
հնարին :

Հրամանատար ոմն քաղաքի ի տեսանել զծու ձկան զդո-  
ղանի հարկանէր սաստկագոյնս : Օրինակ զայս կին ոմն կայր  
ի դողի ի տես խեցգետնոյ երիելց :

Լրազմ , ծնեալ ի Ռոդերտամ , ոչ ժուժէր տեսանել ձուկն  
մի կամ առնուլ զհոտ նորա՝ առանց այլ յայլմէ լինելց :

Յուլիոս կայսր չմարթէր միտ եդեալ հայել յանանուխ ,  
զի քստմունք գնային ընդ ամենայն անդամն մարմնոյ նորա :

Խշանակին ոմն , անուն Լամպէլ , թալանայր ի հոտոյ  
վարդի : Այր ոմն վաճառական կրէր աշացաւ ի նմին ծաղկէ :

Պարտիզպանի ումեմն ասի արբենալ ի հոտոյ սերման լոռի  
ծաղկելց՝ որպէս ի գինուոյ :

Հոտ խնձորոց տայր հսուել արիւն առաա ընդ ոնդունս  
առն ուրումն , որ էր դպիր արքունի յաւուրս ֆրանսուայ  
Ա . ոյ :

Տիկուպրանեայ շրջէր անդէն գոյն երեսացն ի տես նա-  
պատակի , և նուսպէր զօրութիւն նորա :

Յակոբայ Բ . ի , թագաւորին Անգղիացւոց , թալուկ զսըր-  
տիւն գայր ի տես սրոյ մերկելց ի սկատենէ :

Կին ոմն հիւանդատես յորժամ տօղուկս ի վերայ հիւան-  
դաց գնէր , զառաջինն և երկրորդ անդամ կայր լուս . այլ  
ի գնել զերլորդն , զհինգերորդն և զեօթներորդ . բառնայր  
ձիչ ակամայ :

Հոպագէս ոչ կարէր գիշերի լինել ի քուն առանց ձրագէ .  
եթէ ոչ ի սենեկի յորում ննջէրն՝ լուցանէր ձրագ , ոստնցը  
ընդոստ ի քնոյն :

Պաքոնի՝ ի խաւարել Լուսնոյ՝ դառնային երեսքն ի գոյն  
դալկան :

Պայլ դողայր իբրև ջերմնոտ ի լուր ձայնի ջրոյ ծորելոյ  
յաղբերէ :

Երիտասարդ ոմն բարետոհմիկ, ասէ Յուլիոս կայսր, ի  
լսել զձայն տաւդի, անձուկ իմն զգայր միզելոյ :

Լամօթ-Լըվէյշբ չկարէր ժուժ ունել գեղեցկաձայն եր-  
դոց, թէպէտ հիանայր ի լուր ձայնի որոտման և գոչելոյ  
ուժդին հողմոց :

Մին յերիցանց Տիւք-Պոսթօնի յորժամ ընթեռնոյր զՓ. և  
զԵ. գլուխա գրոց Եսայեայ մարդարէի, քիրտն ցուրտ հոսէր  
յերեսաց նորա :

Մի ոմն ի հեծելազօրաց Ալքանթրայ, պատմէ Ֆաարիս  
Քամբանի, թալանայր անդէն ի լսել զանունն առ, թէպէտ  
զգենոյր հանդերձ ասուր :

Բժիշկ ոմն պատմէ . Առն միոյ հիւանդացելոյ այնպէս  
իմն էր խորշութիւն ի վիրաչափէ (sonde), մինչ զի ըլինէր  
մարթ արկանել զգործին ի կիր . ի տես նորին դնէր սցըն  
աղաղակ սաստիկ յոյժ :

Վիմագիր ոմն զդողանի հարկանէր ակամայ, եթէ ան-  
ուան իրիք զոր ունէր գրել փորածիւ՝ էր սկիզբն Ա:

Այսոքիկ և այլ ևս դէպէր այսալիսիք ստոյգք տան ի միտ  
առնուլ հաւաստեաւ՝ եթէ չիք ասել զի ռամկաց եւեթ տգի-  
տաց է ունել խորշութիւն ինչ անդէպ անհանճար և ծաղր  
և ծանակ աշխարհի կալ . զի բազումք յայնցանէ զոր ածաք  
ի մէջ, որպէս յայտ ի պատմութենէ է, են արք նշանաւորք  
գիտութեամբ և զօրութեամբ մտաց :

Պարտ է ապա զդոյշ կալ ծնողաց, մանաւանդ ի տիս  
մանկութեան որդւոց իւրեանց, յամենայնէ որ ինչ մարթի-  
ցի ածել զնոտա ի չարաչար կարիս խորշութեան յիրաց  
ինչ: Կրթութիւն առ անին օգնել օգնէ մանկան ումեք  
ածել աղատ ի կարեայ անտի, այլ երբեմն դէպ ինչ անծանօթ-  
տայ գայթել նմա և անկանել ընդ նովին ամստիւ: Յայնժամ  
խորագէտ հնարից պէտք են . յայնժամ օրինակք և խրատք  
եւեթ հաւանեցուցիչք, և ոչ պատուէր իմամ կամ սաստք

սպառնալեաց , օգնեն ինչ զերծուցանել զմանուկն յայնալիսի կարեաց (¹) :

Այլ է զի անհնարին սաստիկ լինի խորշութիւն յիրաց ինչ ի մարդ . յայնժամ չիք ուստեք օգտել՝ եթէ ոչ ի տիոց , յառնոց զիրոձ իրաց , ի հանճարոյ և յիմացութենէ զգայնոց :

ՊՕՂՈ էՄԻՐՁԵՑՆ (²)

Յ. Գ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԹՈՒՂԹ

ԱՌ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՃԱՇԱԿԻ

Զհանգամանաց Հանդիսիս հարցեալ մեր զկարծիս Տ. Սերովքի Հօր Տէրվիշեան , բանասէրն անուանի հանեցաւ պատասխանի առնել մեզ օրինակ զայս .

· · · Տեարք ,

Որ գիտէրն ոք զշայ լեզուի զմեծատունն հնութիւն , ցաւ մեծ զգայր յանձին՝ տեսեալ եթէ որչափ սակաւք պատուի ունին զնա և քանի՛ բազումք են որ արհամարհիցեն իսկ զնովաւ : Զայս հանգամանս իրաց գիտել եւեթ և լոել չէր արժան : Պարտ էր ի մէջ անցանել արանց որոց կորովի էին միտք և հզօր գրիչք եւ ցուցանել՝ եթէ որչափ ի մոլորութեան կան ոյք այնպէսն խորհիցին և խօսիցին : Զայդ հուսկ ուրեմն սկիզբն առնէք ածել յարդիւնս Դուք , Խնամակալք Ճաշակին : Որք զուղիղ միտսն ունիցին և չկամիցին ընդ կորուստ մերոյ հնոյն բարբառոյ , արդարեւ ուրախ լինիցին , յորժամ տեսանիցեն զի Զեր ի մտի եղեալ է զառաջին եռանդն բորբոքել , որով վառեալ էին երբեմն որդիքն

(¹) Զայս եւ Ռսկեբերան ուսուցանէ (ի զիրս Վեկ. Պողոսի) . « Որպէս եւ մանկուի » , ասէ , « յորժամ երկնչիցին ի չահազին ինչ իրաց , կամ յատուէ կամ ի չուանէ կամ յայլ իմերէ , հարկ լինի բերել յորմէ երկնչինն , եւ ի ծեռին իսկ զնել նոցա եւ ընդելացուցանել » :

(²) Շնորհ ունիմք Տ. Պողոսի Խմբրգէեան թշկի , որ յօրինեալ զգեղեցիկ հատածս զայս գիտնական ի նոր հայերէն՝ եւ մեզ զնել ի Հանդիսիս հնով հայերենիւ :

Մխիթարյաց յափունս Դանուբայ : Ի կէտ նպատակի յոր կամիքն հասանել՝ հնար է միայն ընդ ուղի յոր մտեալն է : Ընդ նոյն գնացեալ ուսուցանիցէք և ցուցանիցէք որոց ուսանելն և տեսանել կամիցին՝ եթէ որպիսի՝ ինչ իցէ լեզու մեր հին . և յայնժամ առնուցուն ի միտ՝ եթէ ամենայն զոր գեղեցիկ ինչ նորն ունիցի , ի հնոյն առեալ է . ուստի փոյթ յանձնին կալցին ուսուցանել զիինն բարւոք առ ի կարող լինելոյ ըզնորն՝ որպէս արժանն է՝ գիտել և արկանել ի կիր : Յայն սակս , յետ բանիցն որ ասացան ուղիղ մոռօք և անկեղծ սրտիւ , կայ մեայ խնդրել յաջողութիւն ձաշակիդ , զի տեւեալ բաւեալ ընդ յամայր ամս ի կեանս՝ մարթիցի ի նոյն ճաշակ ածել զբազումն , որոց տակաւին չզգայցեն քիմք գեղեցկութեանն ճաշակաց :

Հ. Ս. Տ.

### ՀՐԵՇՑԱԿ ԵՒ ՄԱՆՈՒԿ

<p>Զըւարթուն մի լուսաճանանչ էզ ի վայր ի հեշտութեանց զան հեծութիւնք զայր ըզհետ միշտ :</p> <p>Եւ խոնարհեալ յիգր որրոցի միոյ կայր . Ահ եւ զողումն ունին զբքեց իտօնի կայր . Անդորր աստէն եւ խաղաղ չիք թեզ թըւէր իմն անդ պըշնուկ նըմա յիւր պատիքը օր մի՝ ծագել պայծառ բարենըշան զայդ զայր գաղուին ,</p> <p>Որպէս յանծուփի ի ջուրս ալեաց չինչ ապքեր . Անքոյթ յորոց ածէ մըրրիկ խաւարին .</p> <p>Շընորհալի՛ց մանկիկ որ ինձ նըմա . Ա. Ա առ իմէ՞ հասցեն վարանը եւ նիս , աղէտ Ասէր ցընա , ե՛կ օն աղէ . Ակ ընդ Զամբիծ նակատ քո խրովել ետ իս . ընդ ետ ,</p> <p>Ե՛կ մօտ առ իս , եւ տացեն մեզ ե՛ր ունիր . Եւ կապուտակ աչը քո վասն է՛ր մըթացին</p> <p>Զի յերկրի աստ մընալ չէ թեզ ար- ի հեծեծանս եւ յարտասուս ցաւա- ժանի . զին :</p> <p>Զի խընդութիւն չեհաս աստէն ի Ո՛չ . ի թեւս իմ յանբաւութիւնը կափար . դաշտաց</p> <p>Ի հաճոյս իւր տաճչի հոգի աստ ի Գայցես թրոչել , սլանալ ընդ իս սպառ . անդը ի բաց .</p> <p>Ուրախութիւն մարդոյ փոխի զամն Արդ շընորհէ թեզ Տեսչութիւնը վերին</p>	<p>Եւ հեշտութեանց զան հեծութիւնք զայր ըզհետ միշտ :</p> <p>Ահ եւ զողումն ունին զբքեց իտօնի կայր . Անդորր աստէն եւ խաղաղ չիք թեզ օր մի՝ ծագել պայծառ բարենըշան զայդ զայր գաղուին ,</p> <p>Որպէս յանծուփի ի ջուրս ալեաց չինչ ապքեր . Անքոյթ յորոց ածէ մըրրիկ խաւարին .</p> <p>Շընորհալի՛ց մանկիկ որ ինձ նըմա . Ա. Ա առ իմէ՞ հասցեն վարանը եւ նիս , աղէտ Ասէր ցընա , ե՛կ օն աղէ . Ակ ընդ Զամբիծ նակատ քո խրովել ետ իս . ընդ ետ ,</p> <p>Ե՛կ մօտ առ իս , եւ տացեն մեզ ե՛ր ունիր . Եւ կապուտակ աչը քո վասն է՛ր մըթացին</p> <p>Զի յերկրի աստ մընալ չէ թեզ ար- ի հեծեծանս եւ յարտասուս ցաւա- ժանի . զին :</p> <p>Զի խընդութիւն չեհաս աստէն ի Ո՛չ . ի թեւս իմ յանբաւութիւնը կափար . դաշտաց</p> <p>Ի հաճոյս իւր տաճչի հոգի աստ ի Գայցես թրոչել , սլանալ ընդ իս սպառ . անդը ի բաց .</p> <p>Ուրախութիւն մարդոյ փոխի զամն Արդ շընորհէ թեզ Տեսչութիւնը վերին</p>
--	--

Զաւուրս զոր դու կելոց էքր տակաւին : Որոց իցեն, որպիսի սուրբ են քո, տիք,  
Մի՛ ոք յորոց իցենն անդէն ի քում Հուսկ ժամ նոցին դիպի անդ յոյժ  
տան : գեղեցիկ : —

Արկցէ զիւրեւ հանդերծ սըզոյ տըրտ-  
մական . Ի կատարել բանիցու անդէն զըսպի-  
տակ

Տեսցէն մտադիւր ըզոյն զայս ժամ Շարժեալ ըզթեւս իւր սուրացաւ հը-  
բո յետին , թեշտակ  
Որպէս զիարդ ըզվայրկեան քո զա-  
ռաջին : Ցերկինս ի վեր յափտենից ի կա-  
յան :

Մի՛ անդ ճակատը ի սոտեւրս ամ-  
պոց ծածկիցին , Ոչ նւս , հէ՛ք մայր , մընայ մանուկ  
Եւ մի՛ ինչ անդ ցուցցէ զխորհուրդ  
տապանին . ըզպուհւ (1) 8. Պ.

### ՀՈՂԱԳՈՐԾ ԵՒ ՈՐԴԻՒՔ ՆՈՐԱ

Աշխատել միշտ կա՛լ փոյթ յանձին . Խոփ , բահ , բըրիչ , տափան , ցա-  
Լաւ քան զայս չիք քեզ եկամուս : քան , թող ամենայն արկցին ի կիր .  
Հողագործ ոմըն գոյաւոր տեսեալ Խիլ արկեա՛լ որոնեածիք այսպէս զող-  
գօրհաս իւր մօտալուո՞ ջոյն իսկ զարտորայդ :  
Կոչեալ զորդիս իւր խօսեցաւ զայս Մեռանի հայրն . իսկոյն որդիքըն  
առանձին . շրջեն զանդըն վեր ի վայր ,  
Սոյե՛ , զգոյշ լերուք , որդեակը , շր-  
գանակել զայս ազգարակ շրջեն զանդին : Որպիս զալ ամանորայ  
Անգուստ ի հարց վիճակեալ մեզ : Քանի զանցեալ ամըս լի արդեամք էք  
Գանձ ծածկեալ կայ անդ զի-  
տեմ ես : արտորայ :  
Տեղոյն արդա՛րեւ չեմ տեղեակ , Զգտին զարծած ուրեք Թաղեալ . այլ  
Սակայն խնամով որոնեալ մարթ է որ զգիրատն ետ նոցա հայր՝  
ածել յայտ : իմաստութեամբ ուսոյց նոցա նախ  
Ի գալ արեգ ամսոյ գերկիրն դի՛ք բան զիւրեւ մահ ,  
զան առնել արօրադիր : Քան յամենայն զանձ յիւրեանց զան  
լինել վստահ : Ա. Մ. Պ.

(1) Բըղուառ ունի հարուստ իւշ գիշեամիս ոք բնին լուս ունասուն երբ էքրեւ քո-  
հութեանէտ գողեւուս : Այս եք և հաշորդ ուրախութիւն . Առանձունէտ , տու , հաց է  
հինգեւորդ ժամէ առանձուն միւսն ըստըորդ ժամէ երեւսն : Իւ զիւրեալ ժամն առարդ  
ունասունէտ է իւրեւ բանաստեղնութիւն :

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ  
ՀԱՅԵՐԵՒՆԻ ԼԵԶՈՒ

Ա

ԱՆՑԱՆԵԼ ԸՆԴ ԳԻՐՍ . ՔԵՐԻ ԿԱՐԺՄԱՆ՝ ՊՎԵԿ ԱՆՋԲՆԵԼ : \* ԲՆԴ  
ԱՄԷՆԱՅՆ ԻՍԼ ՃԱՌԱ ԱՆՋԳՈՒՔ ԿԱՐԳԱւ : — \* ԶԱՄԷՆԱՅՆ մԵԿ-  
ՆՈՒԹԻՒՆՆ ԺՈՂՈՎՔԵԱՋ և ԷՎԱՆ ԸՆԴ ՆՈՍԱ : — \* ԲՆԴ ԱԲԱՎՔՆ  
ՄԱՏԵԱՆՆ ԱՌԱՋՆՈՂ ԱՎԱՏԱԽԱԹԵԱՆԳ ԱՆՋՐԻ :

ԱՆՑԱՆԵԼ ԸՆԴ ՀՈՒՐ . ԿՐԹԻԿՆ ՀԱՎԵՐՆԵԼ ԱՄԱՆԵՋ ՊՐԵԼԱՄ : \* Ա-  
ՄԷՆԱՅՆ ՈՐ ԱՆՋԱՆԵ ԸՆԴ ՀՈՎՐ՝ հՐՈՎ և ԱՐՔԵԱՍԻ . Այլ ՋՐՈՎՆ  
ԱՐԱԿՄԱՆ ԱՐՔԵԱՍԻ ԱՄԷՆԱՅՆ ՈՐ ՈՇ ԱՆՋԱՆԻԳԵ ԸՆԴ ՀՈՎՐ :

ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ՝ ՎՐԱԽՖԱՄԱՐ ԲԱՆԵՐԻ ԱՆՀԱՄ ԴՐՈՒՐ Ե ԱՌԵ-  
ՋՄՊ ԲԱՆ ՔԱՆԵԼ : \* ԱՆՋԱՔ մԵՔ ԸՆԴ ՀՈՎՐ և ԸՆԴ ՋՈՎՐ , և ՀԱ-  
ՆԵՐ զմեզ ի հանդիսատ :

ԱՆՑԱՆԵԼ ԸՆԴ ՓՈՐՁ ԻՐԻՔ . ԲԱՆԵ ճը ՔՈՐՅԵ ԱՄԱՆԵԼ ՊԵՆԱՄԱՆ :  
\* ԲՆԴ ՎՈՐԾ ԱՆՋԱՆԵԼ ԱՏԱՆՅԱՆԱՋ :

ԱՆՑԱՆԵԼ ԸՆԴ ԻՇՉ . ՔԻՆՆ ՆԵՐԱ ԱՄԻՒՆԻԵԼ ԱՆԴԻՆԵԼ : \* ԱՆՋ-  
ԵՔ ԸՆԴ ՄԱՐՄԻՆՆ ՆՈՐԱ ԱԿԵՄ : — \* ԲՆԴ ՔՊ ԻՍԼ անկ անջցէ  
ՍՈՎՐ :

ԱՆՑԱՆԵԼ ԶՈՄԱՄՐ , ԶԻՒԻՔ . ՔԻՆ ճը կամ բանէ ճը առաջ  
անդին : \* ԲՆԹԱԳԱՎ և անց զՔՈՎԱԵԱՎ : — \* ԼՈՎՄԻՆ , յՈՐԺԱՄ  
ԱՆՋԱՆԵ զարեգակամբ , սկսանի տակաւ նուազել :

ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ՝ ՔԵՐԱՋԱՆԵԼ ՔԻՆ կամ բանէ ճը : \* ԱՅԼ թԵ-  
ՐԵԵՍ ի տարաշխամբհ ինչ երթմալով (պարծիցիս) , և այնու  
թոչունքն անցանեն զքեւ : — \* Եւ թԵՐԵԵՍ հո՞տ քաջ առնու-  
ցուս . այլ չիարես անցանել զշամբ : — \* ԱՅԼ թԵՐԵԵՍ պէսպէս  
արուեստի՞ւք . և ո՞վ ոք յայնմ զմեղուօք զճարտարկօք ան-  
ցանիցէ :

Յ. Գ.

ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՍ

Յ. ԳՈՒՐԳԵԼԻՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ